

եկեղեցիին վրայ, յետոյ զնոց ասպետներու գունդը՝ միանալու քանակին՝ մասնակցելու համար Երուսաղէմի գրաւման :

Ս. Տեղեկութեան հետեանքով Կոտրֆրուայի կողմէն հիմնուած լատին թագաւորութիւնը յանձնուեցաւ անոր եղբորը՝ Պաղտինի, որ փառասէր մրցակիցներու դէմ իր վեհապետական իրաւունքները ապահովելու համար պարտք համարեց թագաւոր պսակուել : Յայտնի է ա՛յն կրօնական զգացումը՝ որ ստիպած էր Կոտրֆրուայի դուքսը հրաժարելու թագաւորական տիտղոսէն : Պաղտին նոյնանման մտածումով մը առաջնորդուեցաւ թագադրութեան համար նախամեծար համարիլ Բեթղեհէմը Երուսաղէմէն : Պատմիչ մը կ'ըսէ թէ «ան յաւակնութիւն չունեցաւ թագ դնելու, ոսկիով և պատուական քարերով զարդարուելու և թագաւոր հռչակուելու Երուսաղէմի մէջ, ուր մեր Փրկիչը, թագաւորաց թագաւորը մինչև ի մահ խոնարհած է աշխարհի փրկութեան համար կրելով փշեղէն պսակը» : Այս ընտրութեան պատճառներուն մէջ պէտք է նկատել նաև Դաւթի օծման յիշատակն ի Բեթղեհէմ, որ անոր հայրենական գիւղն էր : Պաղտին Ա. ի թագադրութիւնը հանդիսաւորապէս տեղի ունեցաւ 1101 Յննդեան տօնին օրը : Դսան տարի վերջը դարձեալ Ս. Ծննդեան եկեղեցիին մէջ Պաղտին Բ. և իր կէնը ընդունեցին թագաւորական օծումը : Այդպիսի առանձնաշնորհում մը պիտի բարձրացնէր Բեթղեհէմի եկեղեցիին գերընտրութիւնը և իր վրայ պիտի հրաւիրէր իշխաններու նպաստը : Բեթղեհէմի եկեղեցին 1101ին ժողովրդապետութիւն էր, 1101–1110ին վանահայրութիւն. այս վերջին թուականին, Պաղտին Ա. ի խնդրանքին վրայ՝ եպիսկոպոսութեան բարձրացաւ : Ասկաղոն, որուն ի քնսս հաստատուեցաւ եպիսկոպոսական նոր աթոռ, իբր ժողովրդապետութիւն հպատակեցաւ Բեթղեհէմի : Այսպէս էր նաև Նազարէթը, որ ի քնսս Սկիւթուպոլսի, եպիսկոպոսութեան բարձրացաւ : Իբր մայրաքաղաք՝ շատ հին աւանդութիւններուն և մերձաւորութեանը պատճառաւ Երուսաղէմի կատարած ոռնձգութիւններէն Բեթղեհէմի եկեղեցին պաշտպանելու համար, վեհապետները մեծամեծ նպաստներ հաստատեցին հոգալու համար ո՛չ միայն կղերին ապրուստը, այլ նաև, զոնէ մասամբ, այն նորոգութիւնները զոր կը պահանջէր հնամենի եկեղեցին : Ազնուականներն ալ առատօրէն մասնակցեցան թագաւորներուն հետ :